

---

---

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԼԵԶՈՒՆԵՐԻ  
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐ

ԳՈՀԱՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

1. Ե և Ո տառերի արտասանությունը գրաբարում  
ու հայերենի բարբառներում

Հայագիտության մեջ ավանդաբար ընդունված է այն տեսակետը, թե ե և ո տառերը գրաբարում և՛ բառասկզբում և՛ բառամիջում հնչում էին ե և օ: Այդ կարծիքին էր Հ. Աճառյանը<sup>1</sup>: Մինևույն տեսակետն են արտահայտել Է. Աղայանը<sup>2</sup>, Հ. Մուրադյանը<sup>3</sup>, Ս. Գյուլբուդաղյանը<sup>4</sup>:

Աճառյանը գտնում է, որ իբրև սպացույց այն բանի, թե բառասկզբում Վ դարում ե - ն հնչվում էր ոչ թե յե (ye), այլ է (e), ծառայում են յԵգիպտոս, յերազի և այս տիպի այլ գրչությունները: Քանի որ եթե ե - ն հնչեր յե, ապա յ նախդիրը պետք է դառնար ի (ի Եգիպտոս)<sup>5</sup>: Սակայն հենց հաջորդ պարբերության մեջ բառացիորեն կարդում ենք. «Երբ ե ձայնավորով սկսվող մի բառ մտնում է բարդության կամ ածանցման մեջ, նախաձայն ե այնու չի հնչվում ye, այլ է: Օրինակ՝ երգ-համերգ, եփել-անեփ»: Արդյո՞ք այս կանոնին չեն ենթարկվում նաև յԵգիպտոս և յերազի գրաբարյան կազմությունները, երբ յ նախդիրը միանում է բառին:

Նույնը վերաբերում է ո ձայնավորին: Հ. Աճառյանը գրում է. «Եթե ո բառասկզբում հնչված լիներ vo, բնականաբար պիտի ստանար յ-ի փոխարեն ի նախդիրը, իբր ի որդի, ի ոսկւոյ»: Ո ձայնավորով սկսվող բառերը գրաբարում ստանում են յ - նախդիրը՝ յորդի, յոսկւոյ, որոնք հնարավոր չէ կարդալ յվորդի, յվոսկւոյ<sup>6</sup>: Բնականաբար այդպես է: Սակայն դարձյալ հաջորդ պարբերության մեջ Աճառյանը գրում է. «Ո» տառը բառամիջում երբեք չի կարելի հնչել vo, այլ միայն օ, ինչպես չորքոտանի, անողորմ, քեռորդի, անողոք»: Բայց չէ՞ ոչ յորդի և յոսկւոյ բառերում ո-ն արդեն բառամիջում է:

Աճառյանը նշում է նաև, որ հայերենի բարբառներում ե և ո բառամիջում ստացել են իե և ուօ հնչումները: Աշխարհի շատ լեզուներում, ինչպես գրում է Աճառյանը, ե և օ ձայնավորներն ունեն երկբարբառային արտասանություն: Հետաքրքիրն

---

<sup>1</sup> Հ. Աճ ա ո յ ա ն. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971, էջ 226–227:

<sup>2</sup> Է. Աղ ա յ ա ն. Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 290:

<sup>3</sup> Հ. Մ ու ը ա ղ յ ա ն. Հայերենի պատմական քերականություն, Երևան, 1982, էջ 94:

<sup>4</sup> Ս. Գ յ ու լ բ ու ղ ա ղ յ ա ն. Հայերենի ուղղագրության պատմություն, Երևան, 1973, էջ 33–36:

<sup>5</sup> Հ. Աճ ա ո յ ա ն. նշվ. աշխ., էջ 596:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 600:

այն է, որ գրության մեջ երբեմն այդ երկրաբառացումը չի էլ արտահայտվում, քանի որ արտասանողներն այն չեն գիտակցում: Այդպես է, օրինակ, ռուսերենում, ուր է և օ ձայնավորները շեշտված վանկում թեթևակի երկրաբառացված են, իսկ է բառակազմում արտասանվում է չէ: Արդյո՞ք նույնը չի կարելի ասել գրաբարի մասին:

Այս տեսանկյունից խիստ ուշագրավ է Ա. Ղարիբյանի տեսակետը: Նա գրում է. «Գրաբար լեզվի մեջ, մեր կարծիքով, չի եղել մաքուր է ձայնավոր, այլ յոտացիայի ենթարկված կամ քմայնացած է, որի արտասանությունը մոտ է երկրաբառայինին, համարյա այնպիսի է, որպիսին ունի ռուսաց լեզուն շեշտի տակ փափուկ բաղաձայնից հետո և կոշտից առաջ (е), օր. `нет, свет, совет և նման բառերի մեջ: Այսպիսի է-ն բարբառագիտության մեջ, ինչպես և գրաբարում գրվում է և տառով»<sup>7</sup>:

Հայերենի բազմաթիվ բարբառներում (Վան, Մուշ, Ուրմիա, Խոյ, Ջուղա և այլն) է-ն երկրաբառացված է (միէ՛ր, ձիէ՛ր, տիէ՛ր): Նույնը վերաբերում է ո ձայնավորին: Ըստ Ա. Ղարիբյանի՝ ո-ն ևս գրաբարում երկրաբառային հնչում ունի և արտասանվում էր մոտավորապես ոը, ինչպես Ջեթունի բարբառում<sup>8</sup>: Ո - ն ավելի խիստ երկրաբառացված է Վանի, Խոյի, Ուրմիայի, Մարաղայի, Հաճրնի բարբառներում, Աշտարակի, Օշականի, Լոռու խոսվածքներում, Նոր-Բայազետի ենթաբարբառում (խոտ>խուէտ, սոխ>սուէխ, փող>փուէղ): Ա. Ղարիբյանն իրավացիորեն նշում է, որ բառակազմի գրական լեզվում գրաբարյան այս ո ձայնավորի ո արտասանությունը ամենալավ ապացույցն է, թե այդ ձայնավորը երկրաբառային արտասանության շրթնային ձայնավոր է եղել, որի երկրաբառային բաղադրիչն ուժեղանալով՝ վերածվել է շրթնատամնային ո բաղաձայնի: Այս երևույթը նկատվում է Երևանի և մի շարք այլ բարբառներում (Երևան, Ջուղա՝ որ>վօր, ոտն>վօտ) : Որոշ բարբառներում, ինչպես նշված է, ո-ն դարձել է վուէ (Վան՝ որ>վուէր, Նոր-Բայազետ՝ ոսկի>վուէսկի): Բառամիջում ո-ն արտասանվում է ուէ (Հաճրն՝ բողկ>պուէխգ):

Ըստ Հ. Աճառյանի՝ կիլիկյան հայերենում ո-ն հնչել է ո (ավելի վաղ շրջանում՝ սօ), իսկ է-ն շեշտի տակ հնչում էր իե, նախաշեշտ վանկում՝ օ, ինչպես՝ ընկեր (ընգիէ՛ր), մեռնիմ (մեռնիմ)<sup>9</sup>: Այսինքն՝ վանկը շեշտից զրկվելու դեպքում սղվում էր երկրաբառի բաղադրիչներից մեկը, սլվյալ դեպքում ի-ն:

Առհասարակ, է և օ ձայնավորների երկրաբառային արտասանությունը հայերենի բարբառներում ավելի շուտ կանոն է, քան բացառություն, և բարբառագիտության մեջ ընդունված է իե և սօ երկրաբառներն արտահայտել է և ո տառերով<sup>10</sup>:

Դիտարկենք, թե ինչ փոփոխություններ կարող են կրել է և ո-ն հայերենի բարբառներում:

Որպես կանոն է - ն միավանկ բառի սկզբում (ասել է թե՛ շեշտի տակ) արտասանվում է չէ կամ նույնիսկ յիէ (ես>յէս, եզ>յէզ, եղ>յէղ, երբ յէփ - Ջուղա, Մարաղա, էս>յիէս, երբ>յիէփ - Հաճրն):

<sup>7</sup> Ա. Ղարիբյանի նշանակություն, Երևան, 1973, էջ 110:

<sup>8</sup> Նույն տեղում, էջ 115-116:

<sup>9</sup> Հ. Աճառյանի նշանակություն, հ. 2, Երևան, 1953, էջ 238-239:

<sup>10</sup> Հ. Աճառյանի նշանակություն, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, էջ 245, 45:

Որոշ դեպքերում ե-ի դիմաց ունենք յի, որը հաստատում է նախնական քմային բաղադրիչի գոյությունը (Համշեն, Թբիլիսի, Մարաղա, Քաբուսիե՝ ես<յիս, երբ<յիփ, Սվեդիա՝ երագ>յիրուգ, եղան>յիդուն, երդում>յիրտոս):

Բառամիջում ևս շեշտի տակ ե-ն հնչում է իե (Հաճըն՝ ասիեդ, ուդիեդ, մանիեդ, արիեդ): Շեշտից զրկվելիս ե-ն երբեմն դառնում է ի, այսինքն սղվում է է-ն (Ագուլիս՝ երես>իրիս, եփել>իփիլ, Արամո՝ երեկ>իրիգաուն, երես>իրեյս, երինջ>իրայնջ, եփել>իփեյլ, Քաբուսիե՝ երկաթ>իրգուրթ, երինջ>իրեինջ, երկանք>իրգընք, երկայն>իրգան, Քեսաբ՝ երագ>իրուեգ, երես>իրիս, երեկ>իրիգ):

Այլ դեպքերում անշեշտ վանկում բառասկզբի ե-ն դառնում է է (Արարատյան, Մարաղա՝ երագ>երագ, երես>երես, երկու>երկու, Եդեսիա՝ երդում>երթում>, երինջ>երինջ, երթալ>երթալ): Տվյալ դեպքում սղվել է երկբարբառի առաջին բաղադրիչը: Անհրաժեշտ է նշել, որ դժվար է գտնել որևէ բարբառ, որը ենթարկվում է այս կամ այն կանոնին առանց բացառության:

Տարբեր բարբառներում ու ձայնավորը բառասկզբում միավանկ բառերում կարող է հնչել վօ, վու<sup>է</sup>, վու, վը, վը<sup>օ</sup> և այլն: Օրինակ՝ ոտն > վօդ, վօդք, վու<sup>է</sup>տ, վըդ, վըտ, վըննը, վուտ, վը<sup>օ</sup>ննը:

Բառամիջում ևս շեշտված վանկում ո-ն շատ բարբառներում երկբարբառացված է (Վան, Ուրմիա, Մարաղա՝ խոտ>խուետ, Աշտարակ, Օշական, Լոռի՝ փող>փուեղ, Հաճըն՝ սոխ>սուեխ, բողկ>պուեխգ):

Բազմավանկ բառերում անշեշտ վանկում ո-ն որոշ դեպքերում դառնում է օ (ոլորել>օլորել, ողորմի>օղորմի, ողջուն>օղջում, ոչխար>օչխար):

Անշեշտ վանկի օրինակով որոշ միավանկ բառերի սկզբում ևս հետագայում ո-ն ստացել է օ հնչումը (Մուշ, Խարբերդ՝ որ>օր): Այնուամենայնիվ, միավանկ բառերում գերազանցապես պահպանվել է շրթնային արտասանությունը: Շատ դեպքերում նույնիսկ անշեշտ վանկում ե և ո ձայնավորների քմային և շրթնային արտասանությունը պահպանվել է (եռալ, երկինք, երկիր, ոգնի, ողբալ, որդի, ոչխար, ոջիլ, ոսկի և այլն):

Քանի որ Հ. Աճառյանը գտնում էր, որ նախապես ե-ն հնչել է է, և հետո վերածվել յե-ի, նա բացատրություն է համարել նախաձայն յե-ն Մարաղայի բարբառի յեռալ, յառալ (եռալ), յեռուն (երեսուն), յերեկ (երեկ), յառանդ (եռանդ) բառերում, իսկ Ագուլիսի և Մարաղայի բարբառներում երկինք և երկիր բառերի սկզբում հնչող յ-ն (Ագուլիս յերգինք, յերգիր, Մարաղա յերգինք, յերկիր ) բացատրում է նրանով, որ այդ բառերը գրական լեզվից կատարված փոխառություններ են: Սակայն դժվար է պատկերացնել, թե երկինք և երկիր բառերը կարող էին գոյություն չունենալ Մարաղայի և Ագուլիսի բարբառներում, մանավանդ որ այդ բարբառները բացառություն չեն կազմում: Մեր բարբառների ճնշող մեծամասնությունը այդ բառերում պահպանել է նախաձայն յե-ն (Ախալցխա, Երևան, Զուղա, Գորիս, Ղարաբաղ, Թբիլիսի, Ոզմի, Անտիոք):

Ինչպես գիտենք, Թբիլիսիի բարբառում միավանկ բառերում առկա է ե>ի, ո>ու հնչյունափոխությունը (տեղ>տիդ, դեղ>դիդ, ոտ>վուտ, որդի> վուրթի, փող>փուղ): Մա ևս բացատրվում է նրանով, որ ե և ո ձայնավորները նախապես հնչել են երկ-

բարբառացված: Այսինքն՝ իրականում կատարվել է ձայնավորի սղում (տիեղ>տիդ, վուռթի>վուրթի):

Թբիլիսիի բարբառում ոչ մի երկբարբառ չկա, դրանք վերածվել են պարզ ձայնավորների: Եթե հաշվի առնենք, որ ե-ն և ո-ն նույնպես երկբարբառային հնչում են ունեցել, ուրեմն կարելի է ասել, որ Թբիլիսիի բարբառում կանոնավոր կերպով բոլոր երկբարբառները պարզեցվել են (փայտ>փետ, լոյս>լուս, ձիւն>ձուն):

Հայերենի որոշ բարբառներում երկբարբառները հնչյունափոխվելով վերածվել են քմային պարզ ձայնավորների (այ>ռ, իւ>ւ, ոյ>ւ): Անշուշտ, քմայնացմանը նպաստել է, եթե չասենք ուղղակի պատճառ է դարձել քմային բաղադրիչը: Բարբառներում առկա է նաև ե > տ հնչյունափոխությունը, որը վկայում է այն մասին, որ ե-ն նույնպես քմայնացած երկբարբառային արտասանություն է ունեցել (Եղեսիա՝ ձեռք>ցոռք, երեսուն>ռոտուն, Ագուլիս՝ երինջ>ոքրինջ, երկու>ոքրկու, գեբան>գյոբոն, քեռի>քյոռի):

Հ. Աճառյանը հայերենում \$ ձայնի ծագման ուղիներից մեկը համարում է հ>\$ հնչյունափոխությունը, որի պատճառը, ինչպես նշում է նա, հ-ին հաջորդող ո ձայնավորի երկբարբառային ու արտասանությունն է<sup>11</sup>: Դրա հետևանքով տարբեր բարբառներում, օրինակ, հող բառի դիմաց ունենք այսպիսի ձևեր՝ ֆղ, ֆոլ, ֆէլ, ֆէօ, ֆուէ, ինչպես նաև ձայնեղ տարբերակը՝ վէլ, վըլ, Գորիսի և Ղարաբաղի բարբառներում, որոնցում \$ հնչյունն առհասարակ չկա:

Կարծում ենք, որ գրաբարում ևս, ինչպես կիլիկյան հայերենում ու հայերենի բազմաթիվ բարբառներում, ե և ո ձայնավորները շեշտված վանկում երկբարբառային արտասանություն ունեին, իսկ բառասկզբում երկբարբառի առաջին բաղադրիչը նույնիսկ ձայնորդի արժեք կարող էր ստանալ (y, w): Ինչ վերաբերում է յերազի, յոսկոյ տիպի գրաբարյան ձևերին, ապա չի բացառվում նախամաշտոցյան շրջանում ի երազի, ի ոսկոյ ձևերի գոյությունը: Հետագայում կատարված հնչյունափոխությունը կարելի է համեմատել սանսկրիտին բնորոշ սանդհիի երևույթի հետ:

Ինչու՞ Մաշտոցը առանձին տառեր չի հնարել երկբարբառացված և առանց երկբարբառացման արտասանվող ե և ո ձայնավորների համար: Որովհետև նա հասկացել է, որ դրանք միևնույն ձայնավորի տարբերակներն են, այսօրվա լեզվով ասած՝ միևնույն հնչույթի ենթահնչույթներն են:

Ինչու՞ է և օ ձայնավորներով սկսվող օտար բառերը հայերեն տառադարձելիս գրաբարում գրում էին ե-ով և ո-ով (Ոլիմպիա, Ողիսես, Երոպա, Երիպիդես, երենոս): Այն պարզ պատճառով, որ գրաբարում օ-ով սկսվող բառեր առհասարակ չկային, իսկ ե-ով սկսվող բնիկ հայերեն բառերը մատնների վրա կարելի է հաշվել (է, էգ, էջ): Մրանից կարելի է եզրակացնել, որ հնում հայերը, իրոք, դժվարանում էին առանց երկբարբառացման մաքուր է և օ արտասանել, իսկ բառասկզբում դրանք արտասանվում էին ie և wo<sup>12</sup>:

<sup>11</sup> Հ. Աճառյան. Հայ բարբառագիտություն, Մոսկվա, 1911, էջ 105:

<sup>12</sup> Հատկանշական է, որ ակադ. Գ. Ջահուկյանը, լինելով այն կարծիքին, որ գրաբարին բնորոշ է եղել ե-ի և ո-ի ոչ-երկբարբառային արտասանություն, այնուամենայնիվ, գտնում էր, որ V դ. հայերենի բարբառներում առկա է եղել նաև երկբարբառային արտասանություն: Առավել հետադարձ գտնվելով՝

*Ուշադրության արժանի է այն փաստը, որ հայերեն և ն ուսումնասիրված լեզուներում ունեն ոչ միայն պարզ է և ուսումնասիրված լեզուներում սկզբնական ձևերը: Օրինակ՝*

|   |   |
|---|---|
| հայ. եղն – ուու. елень  | հայ. երդումն – լատին. jurare «երդ-վել»        |
| հայ. եղևիկ – ոու. ель   | հայ. երեկ – իտալ. ieri «երեկ»                 |
| հայ. ոգել-լատին. vocare «կանչել», սանս. vakti «գոչել», հայ. ոստան – սանս. vastu «տեղ, տուն» | հայ. եթե սանս. yadi «եթե»                     |
| հայ. ողող – իսլանդ. vol «լաց», vola «լալ»   | Հայ. որձ – սանս. vr̥ṣa «որձ»                  |
| հայ. ոստին – իսլանդ. visinn «թառամած, չոր»  | հայ. որոջ – պահլավ. varak, ouերեն värig «գառ» |
| հայ. ոստայն – իսլանդ. festi «պարան, շղթա»   | հայ. ոգի – իսլանդ. voga «համարձակվել»         |
|   | հայ. վայթել – իսլանդ. væta «անձրև, թրջել»     |

*Այսօրինակ գուցաբանություններն այնքան շատ են, որ դժվար է դրանք պատահականություն համարել, առավել ևս, որ որոշ գուցաբանություններ կարող են գտնվել միայն այն դեպքում, եթե և ն ստանդարտ (իմաստ՝ երկրաբանություն) առաջին բաղադրիչը դեն չեն տեսնենք:*

*Կարծում ենք, միանգամայն սխալ է տարածամասնակյա վերլուծություն կատարելիս հայերենը դիտարկել առանց բարբառների՝ հիմք ընդունելով միայն գրաբարի լեզվական իրողությունները: Ակադեմիկոս Ա. Ղարիբյանն իր «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ շատ հաջող օրինակներով ապացուցում է, որ հայերենի բարբառները գրաբարից առաջ գոյություն են ունեցել: Նշելով, որ գրաբարը չունի հարակատար դերբայ, նա ասում է. «Տարօրինակ կերպով ուշադրություն չի նվիրվել այն բանին, որ գրաբար լեզվի մեջ այս դերբայը բավական շատ գործածված է իբրև ածական և հաճախ իբրև գոյական: Օրինակ, գրաբար լեզվի մեջ հանդիպում ենք՝ արարած, կարգած, կազմած, խախտած, բախած, ցուած, կոտորած ձևերին, հանդիպում ենք նաև՝ կալուածք, շինուածք, խնդրուածք, կոտորուած, ստացուած, հարուածք, ստեղծուած, հատուած, հարցուած ձևերին:*

*Բոլոր այս ձևերը այժմ հարակատար դերբայական ձևեր են, մինչդեռ գրաբարը հարակատար դերբայ չունի: Որտեղի՞ց կարող էր գրաբարը, հարակատար դերբայ չունենալով, այդ դերբայից կազմել գոյականներ և ածականներ, որոնք գրաբարի բառային հիմնական ֆոնդի մեջ են մտնում»<sup>13</sup>:*

Գ. Ջահուկյանը հնչյունափոխությունը ներկայացրել է ~ նշանով (գետ~ գիետ, գող~ գուղ), որը ցույց է տալիս, թե պարզ չէ՝ որն է արմատի նախնական տարբերակը, այսպիսով հարցի լուծումը թողնելով ապագային: (տե՛ս Գ. Բ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 63):

<sup>13</sup> Ա. Ղ ա ր ի ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 76–77:

Ա. Ղարիբջանը նշում է, որ կալուածք, շինուածք ձևերի մեջ առկա է կրավորական մասնիկը, որին նույնպես գրաբարը ծանոթ չէ: Ուրեմն, դրանք հայերենի բարբառներում գոյություն են ունեցել դեռևս հնուց<sup>14</sup>:

Ինչպես գիտենք, բառաքնական հետազոտություններ կատարելիս ե և ո ձայնավորներով սկսվող հայերեն արմատները դիտարկվում են իբրև է և օ պարզ ձայնավորներով սկսվող արմատներ: Ինչպես ցույց է տալիս այլ լեզուների բառային նյութի քննությունը, անթույլատրելի կլինեն, ասենք, անգլերենի yellow, yard, yarn, yesterday բառերը ներկայացնել որպես պարզ, ձայնավորով սկսվող բառեր: Հայերեն ոտն [otn], եղն [ełn], ոլոր [olor], ողորկ [olork], եղունգ [ełung], որբ [orb] արմատների ավանդական տառադարձությունը պարզապես թյուրիմացության մեջ է զգում ոչ միայն հայ, այլև օտար ուսումնասիրողներին: Եթե հին անգլերենը գրավոր ավանդված չլիներ, և y ձայնորդն էլ համարվեր ավելորդ, երբևէ հնարավոր չէր լինի պարզել, որ yard-ը անցյալում հնչել է gearđ, yarn-ը՝ gearn:

Ո ձայնավորի շրթնային բաղադրիչի անտեսումը ուսումնասիրողներին հանգեցրել է այն հետևության, որ [v] հնչյունով սկսվող բառեր հին հայերենում առհասարակ չեն եղել: Ո-ով սկսվող արմատների գերակշիռ մեծամասնությունը պարզապես ստուգաբանված չէ, մի մասը համարվել է փոխառություն իրանական լեզուներից: Վ-ով սկսվող գրեթե բոլոր բառերը համարվում են ոչ բնիկ: Նույնիսկ վարդ բառը, որն այլալեզու բառարաններում համարվում է հայերեն բառ, մենք իրանական ենք համարում<sup>15</sup>: Կարծում ենք, որ, օրինակ, ոստան բառը պահլավերենից կատարված փոխառություն չէ [ostan], քանի որ այդ արմատը սանսկրիտում ունի [vāstu] «կայանք» ձևը: Նմանապես անհասկանալի է, թե ինչու պետք է հայերեն ոտն բառը նախապես [otn] հնչեր, երբ բոլոր լեզուներում այդ բառը շրթնային հնչյունով է սկսվում (լատ. pes, pedis, սանս. pād, հ.անգ. ɪfɒt և այլն): Այս կարգի օրինակներն ասպացուցում են, որ այս հարցում ավանդական տեսակետը ճիշտ չէ:

<sup>14</sup> 1958–59 թթ. ՊԲՀ-ի էջերում ծավալվեց հայերենի բարբառների հարցին վերաբերող բանավեճ, որին մասնակցեցին ականավոր լեզվաբաններ Ա. Ա. Ղարիբջանը («Հայ բարբառագիտական հետազոտությունների հիմնական արդյունքները Սովետական Հայաստանում», 1958, -1, «Հայ բարբառների ծագման հարցի շուրջը», 1958, -3), Է. Բ. Աղայանը («Նոր հայերեն բարբառների առաջացման հարցի մասին», 1958, -2) Գ. Գ. Սևակը («Հայ բարբառների ծագման հարցի շուրջը», 1959, -1), Գ. Բ. Ջահուկյանը («Հայ բարբառագիտությունը և հայերենի բարբառների ծագման հարցը», 1959, -3–4): Հին հայերենի բաղաձայնական համակարգին վերաբերող քննարկումներն արձագանք գտան նաև «Вопросы языкознания» հանդեսի էջերում: Ինչ վերաբերում է գրաբարում գոյականաբար գործածված հարակատարի ձևերին, ապա անհրաժեշտ ենք համարում նշել, որ ամենևին համոզիչ չենք համարում Է. Աղայանի փաստարկները՝ Ա. Ղարիբջանի տեսակետի օգտին լրացուցիչ կովան համարելով այն շատ կարևոր փաստը, որ հայերենի հարակատար դերբայի -ած վերջավորության գուգահեռները հանդիսացող քերականական կազմիչներն ուղղակի սփռված են ոչ միայն հ.-ե. լեզուներում, այլև այդ լեզվաընտանիքից դուրս, որն առանձին քննարկման նյութ է:

<sup>15</sup> J o h n P l a t t s. A Dictionary of Urdu, Classical Hindi and English, London, 1959.

2. Ե և Ռ ձայնավորներով սկսվող հայերեն արմատների զուգաբանությունները հնդեվրոպական լեզուներում

Համեմատելով ե և ո ձայնավորներով սկսվող հայերեն արմատները ցեղակից լեզուների համապատասխան արմատների հետ՝ տեսնում ենք բավական խայտաբղետ պատկեր: Ըստ Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ի՝ ե ձայնավորով սկսվող զուգաբանությունների մի մասը սկսվում է պարզ e- ով, երբեմն a- ով: Օրինակ՝ հայ. ել, հուն. ελεσθω հայ. երդումն, օսերեն, ard, art «երդում, ուխտ» (հնիւ. ertu-), հայ. երթ, հուն. ερχομαι «գալ», հայ. եփ, հուն. (հնիւ. sephs, eps-, eph-):

Ինչպես տեսնում ենք, միայն հունարենի տվյալների հիման վրա հնդեվրոպական նախալեզվի ենթադրյալ համարժեքը նույնպես սկսվում է e ձայնավորով:

Եղն «էզ եղջերու» արմատի դիմաց՝ լիտվ. elnis «հյուսիսային եղջերու», elne, alne «եղն», լատիշ. alnis «հյուսիսային եղջերու», հայրուս. alne «անասուն» (իմա՝ եղջերու), հւլավ. jelem «եղջերու», ռուս. елень, «եղջերու», կիւր. elain «եղնիկ», հուն. ελλος «եղնիկ», ελσφος «եղջերու»:

Հայերեն եղջերու բառի համարժեքներն են՝ լատ. alce, alces, հուն. αλκη, հիւլ. elgr, հրգ. elho, elaho, մրգ. elh, elch, գերմ. Elch, անգլս. eolk, անգլ. elk «հյուս. եղջերու»:

Եղ «եղած բան», եղան բառերի դիմաց ունենք հնիւ. g<sup>u</sup>el- արմատը:

Երկան արմատի հնիւ. համարժեքն է՝ grāwanā, քանի որ հայերենից բացի գրեթե բոլոր լեզուներում բառասկզբում հետնալեզվային պայթականներ են սանս. grāvan, գոթ. guairnus, անգլս. cweorn, լիտվ. gimnos, girna, բոլորն էլ «երկանք» իմաստով:

Եօթն/ եաւթն արմատի հնդեվրոպական նախաձևն է՝ septŌ:

Որոշ արմատների նախաձևերը սկսվում են d բաղաձայնով՝ երկայն՝ հնիւ. dewə, երկար՝ հնիւ. dwāro-, երկու՝ dwō:

Որոշ դեպքերում ե-ին հնդեվրոպական նախալեզվում համապատասխանում է p՝ երես հնիւ. prepsa, երեսալ՝ հնիւ. prep, երեց՝ հնիւ. preisk<sup>a</sup>hu, որոշ դեպքերում՝ t, երեք՝ հնիւ. treyes.

Ե ձայնավորով սկսվող արմատների մեջ առանձնանում է մի շարք: Այդ արմատներն ըստ ավանդական հնդեվրոպաբանության համարվում են իրանական փոխառություն: Իրանական ձևերում ե ձայնավորը բացակայում է, հետևաբար այն համարվում է հավելում: Այդ բառերից են՝

երակ – պիլ. \*rak, պրս. rag «երակ»

երամ – պիլ. \*rama «հոտ, խումբ», պրս. ram, rama «երամ, հոտ»

երանգ – պիլ. \*rang, պրս. rang «գույն»

երաշխ – պիլ. \*raxš, սանս. [rakš] «պաշտպանել», անգլս. ealgian «պաշտպանել»

երաշտ – պիլ. \*rašt «ցամաք, չոր», պրս. rašt «շատ չոր»

երասան «սանձ» – պիլ. \*rasan, պրս. rasan «պարան», սանս. racanā «սանձ»

երաստ «դաս, կարգ, խումբ» – պիլ. \*rast, պրս. rast

Ինչպես տեսնում ենք, այս բառերը հնիւ-ի վերականգնված ձև չունեն և հնդիրանականից բացի, այլ ցեղակից լեզուներում զուգահեռներ չեն գտնվել: Բացառությամբ է կազմում երաշխ արմատը, որի նախածնն է *aleq-*, քանի որ հունարեն և անգլոսաքսոներեն արմատները պահպանել են բառասկզբի ձայնավորը:

Ե-ն հավելում է համարվում նաև երեկոյ, երեկ, եղուկ, եղբայր, եղունգ բառերում, քանի որ ցեղակից լեզուներից գրեթե ոչ մեկում այդ ձայնավորը չկա:

Ավելացնենք, որ ստուգաբանված չեն եղեամն, եղեռն, եղերդ «դառնիճ, *cichorium*», եղեգն, եղիճ «եղինջ», եղժ «տձև, խանգարված», եղկ «գաղջ, գոլ», եղջիւր, երագ, երախտ, երան «պարան», երդ «երդիկ», երէ, երինջ, երկաթ, երփն և նույնիսկ երկին և երկիր արմատները: Որքան էլ ավանդաբար ընդունված, այնուամենայնիվ, խիստ տարակուսելի է երես, երևալ, երեսուն, երեք, երեց, եղբայր, եղունգ արմատների ստուգաբանությունը:

Ակնհայտ է, որ ստուգաբանության հիմքում ընկած է ցեղակից լեզուների լեզվական միավորներից «միջին թվաբանական» հանելու պարզունակ մեթոդը՝ հիմք ընդունելով գլխավորապես լատիներենի, հին հունարենի և սանսկրիտի տվյալները: Ըստ Թ. Գամկրելիձեի՝ «վերականգնված հնիւ-ի պատկերը որոշակի լեզվաբանական վերլուծության արդյունք չէ, այլ ավելի շուտ արդյունք է պատմական պատահականության, որը բացատրվում է հնագույն գրական ավանդույթներ ունեցող լեզուների հեղինակությամբ»<sup>16</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, մենք ընդունելի ենք համարում Ա. Ղարիբյանի այն տեսակետը, ըստ որի ե-ն և ո-ն գրաբարում երկրաբառացված հնչում են ունեցել: Ավելին, այդ երկրաբառների ye և wo/vo արտասանությունը գրաբարում և հայերենի բարբառներում գոյություն են ունեցել դեռևս նախամաշտոցյան շրջանում: Մենք որոշեցինք քննության առնել անգլերեն [j] ձայնորոշիչ սկսվող արմատները, համեմատելով դրանք հին անգլերենի հետ՝ հաշվի առնելով այն, որ անգլերենը մի լեզու է, որը 1000-1500 տարվա ընթացքում նկատելի հնչյունական փոփոխություններ է կրել: Արդյունքում ստացվեց հետևյալ պատկերը.

- հին անգլ. gearđ → միջին անգլ. yerđ → նոր անգլ. yard «բակ»
- հ. անգլ. gēar → մ. անգլ. yeer → ն. անգլ. year «տարի»
- հ. անգլ. giernan → մ. անգլ. yernen → ն. անգլ. yearn «տենչալ»
- հ. անգլ. giellan → մ. անգլ. giellan → ն. անգլ. yell «բղավել, զոռալ»
- հ. անգլ. geolu, geolo → մ. անգլ. yelon → ն. անգլ. yellow «դեղին»
- հ. անգլ. geoc → ն. անգլ. yoke «լուծ»
- հ. անգլ. geong → մ. անգլ. yong → ն. անգլ. young «երիտասարդ»
- հ. անգլ. geon → ն. անգլ. yon «այնտեղ»
- հ. անգլ. gearn → ն. անգլ. yarn «բուրդ, թել»

<sup>16</sup> Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейский язык и индоевропейцы. Реконструкция и типологический анализ праязыка и протокультуры, Т. 1, Тбилиси, 1984, с. 9.



Հին անգլերենում 3 գրույթը (որը հետագայում դարձավ g) ներկայացնում էր չորս դիրքային տարբերակ. հետնալեզվային պայթական [g]՝ հետին շարքի ձայնավորներից առաջ, քմային ձայնորդ [y]՝ առջևի շարքի ձայնավորներից առաջ և հետո, կոկորդային շփական ձայնեղ [ɣ]՝ հետին շարքի ձայնավորների միջև և հետնաքմային պայթական [g'] հիմնականում [k] հնչյունից հետո: Օրինակ՝ հին. անգլ. gān [g] «գնալ», gēar [y] «տարի», dæg [g], «օր», dagas [ɣ] «օրեր», sec gan [gg'] «ասել»: Այդ ենթահնչյուններից մնացել են միայն կոշտ [g] հետնալեզվայինը և [y] ձայնորդը, որոնք այժմ առանձին գրույթներով են արտահայտվում, իսկ [ɣ]-ն և [g']-ն վերացել են: Փաստորեն [y] ձայնորդը հին անգլերենում g հետնալեզվային պայթական հնչյունի դիրքային տարբերակն է եղել:

Հին անգլերենի օրինակը պարզորոշ ցույց է տալիս, որ հետնալեզվային պայթականները կարող են քմայնանալ՝ առաջացնելով [y] ձայնորդը: Պայթականը «մաշվում է», պայթյունը վերանում է, քմայնացումը՝ մնում: Այն կարող է կատարվել նաև բառամիջում կամ բառավերջում՝ նախորդ ձայնավորի ազդեցությամբ:

g → [g'] → y

|              |                     |              |                    |
|--------------|---------------------|--------------|--------------------|
| հին անգլերեն | նոր անգլերեն        | Հին անգլերեն | նոր անգլերեն       |
| dæg          | day «օր»            | Brægen       | brain «ուղեղ»      |
| teg «պարան»  | tie «կապել, փողկապ» | Ænlic        | only «միայն»       |
| snegol       | snail «խիուռնջ»     | hālig        | holy «սուրբ»       |
| tigele       | tile «աղյուս»       | twentig      | twenty «քսան»      |
| nigan        | nine «ինը»          | regen        | rain «անձրև»       |
| secgan       | say «ասել»          | noegl        | nail «մեխ, եղունգ» |
| hagl         | hail «կարկուտ»      |              |                    |

Հետնալեզվային պայթական [g]-ն մեծ մասամբ պահպանվել է գերմաներենում.

|            |                    |            |                  |
|------------|--------------------|------------|------------------|
| գերմաներեն | անգլերեն           | գերմաներեն | անգլերեն         |
| Sagen      | say «ասել»         | Garn       | yarn «բուրդ»     |
| Tag        | day «օր»           | Weg        | way «ուղի»       |
| Hagel      | hail «կարկուտ»     | zwanzig    | twenty «քսան»    |
| Nagel      | nail «մեխ, եղունգ» | fliegen    | fly «թռչել»      |
| Regen      | rain «անձրև»       | Segel      | sail «առագաստ»   |
| legen      | lay «դնել»         | Siegel     | seal «կնիք»      |
| liegen     | lie «պառկել»       | lügen      | lie «ստել»       |
| Auge       | eye «աչք»          | gieren     | yearn «տենչալ»   |
| Wägen      | weigh «կշռել»      | gestern    | yesterday «երեկ» |

Շամանակակից շվեդերենում g գրույթով արտահայտվում են [g] հետնալեզվային պայթականը (a, o, u, å ձայնավորներից առաջ և բառավերջում) և [y] քմային ձայնորդը (i, e, ä, ö, y ձայնորդներից հետո բառասկզբում և l, r ձայնորդներից հետո բառավերջում): Gj տառակապակցությունը հնչում է [y], այսինքն՝ g-ն այլևս չի արտասանվում: Jag «ես», dag «օր» բառերի արտասանության

մեջ նկատվում է բառավերջի *g*-ի անկում՝ [ja:], [da:]: -ig ածանցով վերջացող բառերում *g*-ն այլևս չի արտասանվում:

Շվեդերենի արդի վիճակը հարևան է անգլերենի այն վիճակին, երբ *g*-ն քմային ձայնավորներից առաջ արդեն հնչում է [y], սակայն գրության ձևը մնում էր անփոփոխ:

| [g]          | [y]                        | lg, rg [y]            |
|--------------|----------------------------|-----------------------|
| gren «ճյուղ» | giva [ji:va] «տալ»         | älg[ɛlj] «որագդեղն»   |
| gróda «գորտ» | gissa[jis:a] «կռահել»      | torg[torj] «հրապարակ» |
| gräs «խոտ»   | göra «գործ»                | korg[korj] «զամբյուղ» |
| grön «կանաչ» | gärna «հաճույքով»          | karg[karj] «սակավ»    |
| gård «երեկ»  | gjuta «լցնել»              | helg[hɛlj] «տոն»      |
| gård «բակ»   | gäv «լավ»                  | farg[farj] «ներկ»     |
| gårm «թել»   | gemen «հասարակ, սովորական» | varg[varj] «զայլ»     |

Նմանատիպ երևույթ կա ժամանակակից նորվեգերենում: Շեշտված *i*, *y*, *ei*-ից առաջ *g*-ն արտասանվում է [y]՝ gi [ji:], «տալ», gift «թույն», geit «այծ», geist «ոգի», որոշ դեպքերում *e*-ից հետո [i]՝ negl, segl, regn, tegn, jeg, meg, deg, seg:

*G* բաղաձայնի անկում է տեղի ունեցել՝  
ա) բառասկզբում յ կիսաձայնից առաջ՝

|                |                     |                        |
|----------------|---------------------|------------------------|
| gjerrig «ազահ» | gjenge «ընթացք»     | gjette «գուշակել»      |
| gjest «հյուր»  | gjerd «արարք, գործ» | gjørne «հաճույքով»     |
| gjord «գործ»   | gjørde «ցանկապատ»   | gjerning «գործ, արարք» |
| gjore «անել»   | gjær «խմորիչ»       | gjènde «ընթացք»        |

*p*) որոշ բառերում *ϕ* և *n* տառերի միջև (løgn, døgn)

*q*) -ig և lig ածանցներում (nylig և այլն), թեպետ գրության մեջ պահպանվում է:

*G* բաղաձայնի անկման օրինակներ են դանիերենում. jeg [jai] «ես», mig [mai] «իմ», regne [rainə] «հաշվել», regning [rainɛŋ] «հաշիվ», regn [rai'n] «անձրև», fugl [fu'l] «թռչուն» բառերը: Վերջին երկու բառերում [g] պայթականը վերածվել է կոկորդային պայթունի:

Ձայնավորների, ինչպես նաև ձայնորդի և ձայնավորի միջև *g* պայթականը շփականանալով՝ վերածվում է-ի [ɣ]

Իսլանդերենում երկու ձայնավորների միջև գտնվող *g* պայթականը վերածվում է [y] քմային ձայնորդի քմային ձայնավորից առաջ, և բոլորովին սղվում է յ ձայնորդից առաջ: Օրինակ՝

|                            |                          |
|----------------------------|--------------------------|
| agja [aija] «վախեցնել»     | agi[aiji] «խոնավություն» |
| regin [reijin] «աստվածներ» | árdegi[aurdiji] «առավոտ» |
| segja [seija] «ասել»       | eigin[eijin] «սեփական»   |

Հետնալեզվային պայթականների անկումը թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում խիստ բնութագրական երևույթ է ոչ միայն գերմանական խմբի լեզուների համար: Այն հանդիպում է և այլ լեզուներում: Օրինակ, լատիներենի ցո տառակապակցությունը իտալերենում վերածվել է քմային *n*-ի, թեպետ գրության ձևը պահպանվել է.

լատիներեն

իտալերեն

|                     |                             |
|---------------------|-----------------------------|
| āgnus, ī            | Agnello (an'ello) «գաննուկ» |
| cognōmen, īnīs      | cognome «հայրանուն»         |
| Dīgnus              | degno «արժանի»              |
| īgnis, īs īS        | igne «կրակ»                 |
| Lignum              | legno «փայտ»                |
| rēgno, are          | regnare «թագավորել»         |
| Sīgnum «նշան,խարան» | Segno «նշան,խորհրդանիշ»     |
| Magnus              | magno «մեծ»                 |

Նոր հունարենում հին հունարենի  $\gamma$  տառն ունի արտասանության երեք տարբերակ՝ [y] «յ»՝ քմային ձայնավորից առաջ, [g] «գ»-ից առաջ և [ɣ] «ղ»՝ այլ դիրքերում:

Այսպիսով,  $\gamma\epsilon\nu\epsilon\alpha$  «ագգ, ցեղ»,  $\gamma\epsilon\nu\epsilon\sigma\eta$  «ծագում, ծնունդ»,  $\gamma\epsilon\rho\alpha\nu\delta\omicron\varsigma$  «կռունկ»,  $\gamma\epsilon\rho\nu\omicron$  «թեքել, ծռել»,  $\gamma\epsilon\rho\omicron\varsigma$  «ծերունի»,  $\gamma\epsilon\phi\upsilon\rho\alpha$  «կամուրջ»,  $\gamma\iota\delta\omicron\varsigma$  «որդի»,  $\gamma\iota\nu\omicron\mu\alpha\nu$  «առաջանալ»,  $\gamma\upsilon\nu\alpha\iota\kappa\alpha$

«կին»,  $\gamma\upsilon\rho\epsilon\nu\omega$  «փնտրել, հարցնել» բառերում բառասկզբի  $\gamma$ -ն նոր հունարենում հնչում է [y] և ոչ թե [g]:

Անչափ հետաքրքիր է, որ հետնալեզվային պայթականների նույնանման հնչունափոխության օրինակներն ուղղակի սփռված են հայերենի բարբառներում: Հետնալեզվայինների քմայնացմանը կամ անկմանը հատկապես նպաստում է ն ձայնորդի հարևանությունը: Պայթականները «մաշվում են» բառավերջում, բառամիջում (երբեմն հոգնակիի վերջավորությունից առաջ), նույնիսկ բառասկզբում.

• կանգնել – (նգ > ɣ) Սալմաստ, Ալաշկերտ, Վան կայնել, Մարաղա կայնել, Կարին, Ոզմի կայնիլ, Մեղրի կանիլ, Եդեսիա, Ասլանբեգ, Խարբերդ, Պոլիս, Մեքաստիա, Տիգրանակերտ կայնիլ, Սվեդիա գայնիլ, Ակն գոյնել, Սուչավա գաննել, Հաճըն գայնել, գանել, Նոր Նախիջևան գայնել:

(նգ > ɣ) Թբիլիսի կանգնիլ, կաղնիլ, Երևան, Ղարաբաղ կաղնել, Համշեն կողնուշ:

• անկանել/ընկնել – (նկ > ɣ) Խարբերդ, Կարին, Մեքաստիա, Ըյնիլ, Վան իյնել, Նոր Նախիջևան իյնել, Ըյնել, իննել, Ակն. իյնիլ, Ասլանբեգ, Պոլիս, Ռոդոսթոն, իյնալ, Սալմաստ ինել, Մարաղա իյնել, իննել (Կտր ինգնամ), Սուչավա ըննիլ, Մեղրի նանիլ, Տղնա գյընիլ,

(նկ > ɣ) Համշեն ըղնիլ, Ղարաբաղ ըղնել:

• ծունկ – Ասլանբեգ ձիւնգ, ձիւ, Ղարաբաղ ձո՛նգ՛նը, ձո՛գնը, Ղարաղաղ ձօգն,

Ազուլիս ձէյնը:

• կռունկ – Ղարաբաղ կռօգ՛նը, կրօ՛յնը, կու՛րենգ՛, Ակն (հոգն.՝ գրրըլվի):

• աքլոր – Վան այիլէօր, Սալմաստ մյիլէօր, Մարաղա այիլէօր, Ուրմիա մյիլէօր:

Օրինակներ առանձին բարբառներից՝

|         |                      |      |                 |
|---------|----------------------|------|-----------------|
| Ղարաբաղ | եղունգ > դենգ, դեյնը | Վան՝ | հագնել > խայնել |
|         | ունկ > օյնը          |      | երիկ > իրիյ     |
|         | լիքը > լիքը, լի՛յնը  |      | նամակ > նամայ   |
|         | ձուկ > ձիւգ, ձիւյ    |      | ծաղիկ > ծաղիյ   |
|         | արեգակ > ըրի՛ք՛նակ,  |      | փակվի > փոյվի   |
|         | ըրի՛յնակ             |      |                 |

|         |  |          |  |
|---------|--|----------|--|
|         | ծունկ > ծո՛ւնք(նր, ծո՛ւյնր   |          | ճրագ > ճրահ՛   |
| Մարադա՛ | պստիկ > փստիկ<br>ճկվել > ճիյվել<br>քակվել > քայվել<br>ճգնել > ճըյինել<br>երեկ > յերէկ(, յերէյ<br>զավակ > զովոյ | Սալմաստ՛ | օգնել > էօյինել<br>թեքվել > թիհվել<br>հոնգել > խոյնել<br>թքել > թըյինել<br>ձուկ > ծիւկ(, ծիւնո |

|          |                  |         |                           |
|----------|------------------|---------|---------------------------|
| Ագուլիս՛ | արեզակ > ըրոյնակ | Համշեն՛ | Ծագել > ճէհուշ,<br>ճահուշ |
|----------|------------------|---------|---------------------------|

Ի նչպէս երևում է բերված օրինակներից, գ, կ, ք պայթականները քմայնանալով վերածվում են յ, հ՛ ձայնորդների կամ մաշվելով վերածվում են դ-ի և հ-ի:

Յուրօրինակ հնչյունափոխություն է կատարվել Ասլանբեգի բարբառում, ուր ետնալեզվային պայթականները վերածվել են կոկորդային պայթյունի՝

|                |                       |                   |
|----------------|-----------------------|-------------------|
| թագ > թա*      | հինգ > հինգ, հիյ, հի* | ակն > ա*          |
| երգ > եր*      | ճեղք > ջըխք, ջըխ*     | բողկ > բեղ*       |
| տաք > դաք, դա* | ազգ > սս*             | շուք > շիւք, շիւ* |

Որոշ դեպքերում դրանք վերածվում են յ ձայնորդի: Օրինակ > օրինայ, իլիկ > իլիգ, իլիյ, ճանկ > ջանգ, ջայ:

Բառասկզբում ետնալեզվային պայթականի անկման օրինակներ են՝ կոզնի > ոզնի, կեղծ > եղծ (թեպետ ընդունված է այս բառերում պայթականը հավելում համարել):

Տարբեր բարբառներում բառասկզբում կարող է տեղի ունենալ անշեշտ վանկի ամբողջական անկում՝ անալի > նալի, ածելի > ծելի, նմանիլ > մանիլ, ողկույզ > գուզ, գնալ > նեօլ, քսան > սօն, ընկույզ > գոզ, ընձիկ > ձիկ, ըլել > լել և այլն:

Այժմ դիտարկենք հայերենի ո տառով սկսվող արմատները: Դրանք ևս կարելի է բաժանել մի քանի խմբի՝

ա) արմատներ, որոնց հնիս-ում համապատասխանում են օ ձայնավորով սկսվող բառեր: Մրանց թիվը բավական մեծ է. օրինակ՝ ոզնի (հնիս. og'hinio), ոգոր «ճյուղ, ճիպոտ» (հնիս. ozg'ho «ճյուղ»), ոլոք (հնիս. oleg-), ողբ (հնիս. olbh-), ողն (հնիս. olen-), ո-ողող «ողբ» (հնիս. ol-), ողջ (հնիս. olyo-), ոյծ «պաղ, ցուրտ» (հնիս. oug'-), ոսկր (հնիս. os-), ոստ «ճյուղ» (հնիս. ozdos), ոստին «անջրդի, չոր» (հնիս. ozd), որբ (հնիս. orbhos), որձ (հնիս. org'hi), ողորմ (հնիս. orm-):

բ) Արմատներ, որոնց համապատասխանում են հնիս-ի այնպիսի տարբերակներ, ուր ո-ն (vo) ընդհանրապես չկա, այսինքն՝ բառն սկսվում է ո-ին հաջորդող բաղաձայնով. օրինակ՝ ողորկ (հնիս. lorg<sup>w</sup>), ողոք «աղաչանք» (հնիս. lok<sup>2</sup> «խոսել»), ոռնալ (հնիս. ru «ոռնալ, գոչել»), որոճ (հնիս. rod-), ործ (ործկալ) (հնիս. rug-reug):

գ) Արմատներ, որոնց համապատասխանում է հնիս-ում p-ով սկսվող բառեր, այսինքն՝ հայերենի ո-ի դիմաց՝ հնիս. po-: Օրինակ՝ որդի (հնիս. portiyō-), որթ «հորթ» (հնիս. porthu-), որս (հնիս. porko's), ոզի (հնիս. peu- «փչել»), ողող(ել) (հնիս. pel-pol-pl-), ոտն (հնիս. pedo-):

դ) Փոխառյալ բառեր. օրինակ՝ *ոյժ, ոստան, ոստիկան, որիզ*:

ե) Չստուգաբանված արմատներ, որոնք առավել մեծ թիվ են կազմում՝ ոգել «ասել, խոսել», ոգորել «կովել, մարտնչել», ոլոն, ոլոր, ոխ «քեն», ողկույզ, ոճ «կարգ, կանոն, ձև», ոճիր, ոջիլ, ոռն «գամ, սեպ», ոսկի, ոսոխ, ոսպն, ոստ «ցատկ», ոստայն, որդն, որեար «մարդիկ», որթ «կողով», որմ, որոգայթ «ծուղակ», որոմն «ցորենին վնասող բույս», որոշ, որոջ «գառնուկ», որոտ, որջ:

զ) Արմատներ, որոնց համապատասխանները հնիս-ում սկսվում են  $k^w$ օ;  $g^w$ օ-ով: Օրինակ՝ *ո՞ռվ* (հնիս.  $k^w$ օ-,  $g^w$ օ-), որկոր (հնիս.  $g^w$ er-/ $g^w$ or- հնիս-ի  $g^w$ օr  $g^w$ օr կրկնակիից), որովայն (հնիս. qrop):

Փորձենք դարձյալ հին անգլերենի օրինակով ցույց տալ հետնալեզվային պայթականների շրթնայնացումը:

հին անգլ. swelgan > նոր անգլ. swallow «կուլ տալ»

հ. ա. boga > ն. ա. bow «աղեղ»

հ. ա. folgian > ն. ա. follow «հետևել»

հ. ա. borgian > ն. ա. borrow «պարտք վերցնել»

հ. ա. welig > ն. ա. willow «ուռի»

հ. ա. mearg > ն. ա. marrow «ոսկրածուծ»

հ. ա. morgen «առավոտ» > ն. ա. morrow «վաղը»

հ. ա. togian > ն. ա. tow «քաղել»

հ. ա. āgen > ն. ա. own «սեփական»

հ. ա. gealgan > ն. ա. gallows «կախադան»

Հետաքրքիր է անգլերենի արմատները համեմատել գերմաներենի արմատների հետ: Գերմաներենում *g-ն* մեծ մասամբ պահպանված է:

գերմ. borgen – անգլ. borrow «պարտք վերցնել»

գերմ. Galgen – անգլ. gallows «կախադան»

գերմ. Bogen – անգլ. bow «աղեղ»

գերմ. Morgen – անգլ. morrow «առավոտ»

գերմ. folgen – անգլ. follow «հետևել»

գերմ. Teig – անգլ. dough [dou] «խմոր»

գերմ. Vogel – անգլ. fowl «թռչուն»

գերմ. Woge – անգլ. wave «ալիք»

գերմ. Säge – անգլ. saw «սղոց»

գերմ. sagen – անգլ. saw «սղոցել»

գերմ. eigen – անգլ. own «սեփական»

գերմ. beigen – անգլ. bow «ձռել, թեքել»

գերմ. nagen – անգլ. gnaw «կրծել»

գերմ. tragen «կրել, տանել» – անգլ. draw «քաշել»

Նման օրինակներ կան շվեդերենում, իսլանդերենում:

շվեդ. bõrga, նորվ. bõrge «պարտք տալ» – անգլ. borrow «պարտ վերցնել»

շվեդ. bõga, նորվ. bukke – անգլ. bow «խորսիկ»

շվեդ. båge, իսլ. bugur [by:gyʀ] – անգլ. bow «սղեղ»  
 շվեդ. deg, իսլ. deig [dei:g] – անգլ. dough «խմոր»  
 շվեդ. drage, իսլ. draga [dra:ga] – անգլ. draw «1) քաշել 2) զծել»  
 շվեդ. fōgel – անգլ. fowl «թռչուն»  
 շվեդ. gnage, նորվ. gnage – անգլ. gnaw «կրծել»  
 նորվ. age – անգլ. awe «երկյուղածություն, վախ»  
 նորվ. sag, såge - անգլ. saw «սղոց, սղոցել»  
 նորվ. svelge, svelgje – անգլ. swallow «կուլ տալ»  
 նորվ. sorg – անգլ. sorrow «վիշտ»  
 իսլանդ. gǫlgi [gǫulgi] – անգլ. gallows «կախաղան»  
 իսլանդ. eiga [ei:ga] – անգլ. own «ունենալ, տիրել»  
 իսլանդ. belgja [belgja] – անգլ. blow «փչել»

Հնչյունափոխությունը կատարվել է հետևյալ սխեմայով՝  
 $g \rightarrow (g^w) \rightarrow w$

կամ՝

$g(k) \begin{cases} \rightarrow (g^y) \rightarrow y \\ \rightarrow (g^w) \rightarrow w, \end{cases}$

որտեղ արտացոլված է հետնալեզվային պայթականների քմայնացումը և շրթնայնացումը: Բերված օրինակները ցույց են տալիս, որ պայթականը քմայնանում է գերազանցապես քմային (i, e) ձայնավորներից հետո, իսկ շրթնային (o, u) ձայնավորներից հետո շրթնայնանում է: Սակայն քմայնացման ու շրթնայնացման պատճառ կարող են դառնալ նաև հաջորդող ձայնավորները:

Հայերենում որոշ բառերում գոյություն ունի արմատի տարբերակվածություն՝ հետ>ոտ, հոգի>ոգի, հորթ>որթ, հոլ/հոլով>ոլոր, հեղեղ>ողող, ուր հ-ով սկսվող տարբերակներն առաջնային են այնպես, ինչպես դրանք առաջնային են հետևյալ բարբառային ձևերում՝ հող> ֆող /վրղ/, հոգի > ֆոքի, հոն >ֆոն, հորթ >ֆորթ, և այլն<sup>17</sup>:

Կարծում ենք, որ հայերենում բառասկզբի ե և ո տառերի տակ թաքնված են հետնալեզվային պայթականներ: Հին անգլերենում կատարված հնչյունափոխությունը տիպաբանորեն բացատրում է այն, ինչ, ըստ երևույթին, կատարվել է նախամատուցյան շրջանի հայերենում:

Հաշվի առնելով, որ ե-ն գրաբարում ունեցել է յե հնչումը, դժվար չէ գտնել հայերեն արմատների և այլ լեզուներում գոյություն ունեցող զուգահեռ ձևերի կապը: Ավելին, եթե y և w Օ այնորդները կարող են առաջանալ միևնույն հետնալեզվային պայթականներից (k, g), ապա հայերեն ո-ով սկսվող արմատներին կարող են հա-

<sup>17</sup> Հայերեն հետ արմատը լատիներեն pes, pedis արմատի ծագումնաբանական զուգահեռը չէ, ինչպես ընդունված է կարծել: Այս արմատն ունի այլ զուգահեռներ հ.-ե. լեզուներում, որոնք, չգիտես ինչու, չեն դիտարկվում, ինչպես, օրինակ՝ ոու. код, ед-у:

Հայերեն հայր արմատի տարբերակներից է որ դերանունը, որն այլևս գոյականաբար չի գործածվում (հոգնակին՝ որեար, պահպանված է գրաբարում): Քերականական իմաստի փոփոխման տեսակետից համեմատելի է գերմ. man, wer դերանունների հետ:

մապատասխանել այլ լեզուներում [y]- ով սկսվող արմատներ, և հակառակը: Օրինակ՝ հայերեն՝ ոգնի, ռուսերեն *ѣж*, բառակզբի հետնալեզվային պայթականը պահպանված է հայերեն կոգնի բառում: Հին անգլերենում պահպանված և այժմ գործածությունից դուրս եկած *welkin* բառը, որ հայերեն երկին արմատի զուգահեռն է, հաստատում է  $k < ^w y$  անցումը, այսինքն՝ երկուսի նախաձենն էլ սկսվել է ետնալեզվային պայթականով: Պայթականի օգտին է խոսում և լատիներեն *caelum* «երկինք» ձևը:

Վերոհիշյալից կարելի է եզրակացնել, որ՝

1. Ե և ո տառերով սկսվող հայերեն արմատների նախաձայն պայթականներն ընկել են, որի ապացույցը կարող են հանդիսանալ այդ արմատի զուգաբանությունները այլ հ.-ե. լեզուներում: Օրինակ՝

հայ. եղենն – հ. անգլ. *cwellan*, անգլ. *kill* «սպանել», լիտվ. *galas* «մահ»

հայ. եղջիւր – հուն. *κερας*, լատ. *cervus* «եղջերու»

հայ. երագ – ռուս. *греза*

հայ. երասան – նորվ. *greie* «ձիասարք», լատիշ. *groži* «սանձ»

հայ. եփ – ռուս. *кипеть*, լիտվ. *kepti*, լատիշ. *cept* «թխել, տապակել», և այլն:

հայ. եղնին – իսլանդ. *greni* շվեդ. *gran* «եղնին»:

հայ. երգ – լատ. *carmen* «երգ», իսլ. *kyrja* «երգել»:

հայ. երթ – շվեդ. *köre* «գնալ, երթալ», լատ. *gradus* «քայլ, ընթացք; աստիճան»:

հայ. երկաթ – լիտվ. *gelezis*, ռուս. *железо* «երկաթ»:

հայ. եղեամն – լատ. *gelo*, *āre* «սառչել, սառեցնել», իսլանդ *kala* «սառչել», *kæla* «ցուրտ»:

հայ. ողոր «աղաչանք» – իսլանդ. *klaga*, նորվ. *klage* «բողոք»:

հայ. ողող «ողբ» – լիտվ. *gailinti* «ողբալ»:

2. Գ պայթականով սկսվող հայերեն արմատները, որոնք ըստ ավանդական հնդեվրոպաբանության ծագում են w/v-ով սկսվող նախաձևերից, իրականում պահպանել են իրենց հնագույն ձևը: Բառակզբի հետնալեզվայինները պահպանված են նաև այլ հնդեվրոպական լեզուներում: Ստորև ներկայացնում ենք հայերեն արմատների այն զուգաբանություններից մի քանիսը, որոնք հաշվի չեն առնվել այդ արմատները ստուգաբանելիս.

հայ. գեղձ «փափագ, տենչ» (հնիս. *vel*) – սանս. *garda* «տենչալ», *gardha* «ազահուրյուն», լատիշ. *kare* «տենչ, ծարավ», *kars* «ազահ», գերմ. *gieren* «տենչալ», *Gierde* «տենչ, ծարավ», հին անգլ. *giernan* «տենչ ալ», շվեդ. *gärna*, նորվ. *gerne*, իսլանդ. *gjarna* «հաճույքով», իսլանդ. *gimast* «տենչալ»,

հայ. գին (հնիս. *ves-no*) – սանս. *gan* «հաշվել», լիտվ. *kaina* «գին», *kainoti* «գնահատել», լատիշ. *cena* «գին», ռուս. *цена*,

հայ. գիր ( *wer*) – սանս. *kiraka* «գրող, տարեգիր», լատ. *scribere* «գրել», հուն. *γραφω*,

հայ. գործ (հնիս. *vorg'*-) – սանս. *kar* «անել, կատարել», հինդի *karma* «անել», *karta* «արված», պրս. *kardan* «անել», շվեդ. *göra* «գործ», *gjord* «արված», նորվ. *gore* «անել», իսլ. *gerð* «արարք», լատ. *creare* «ստեղծել»,

հայ. գեղմն (*հնիս. velmn*) – գերմ. Garn «բուրդ», իսլ. garn «բուրդ», նորվ. garn «թել», հ. անգլ. gearn «բուրդ, թել», սանս. carman «մորթ, մորթի»,

հայ. գետ – լիտվ. keteti «մտադրություն ունենալ», իսլ. geta «գուշակել, հանելուկ, ենթադրություն», շվեդ. gåta «հանելուկ», շվեդ. gissa «կռահել», նորվ. kjetter «սազատախոհ», սանս. cetana «խելք, միտք»:

3. Վերոբերյալ օրինակների շարքում ներկայացված չեն հայերեն արմատների w/v շրթնային հնչյուններով սկսվող *հ.-ե. գուգաբանությունները, քանի որ դրանք վաղուց հայտնի են: Գ պայթականով սկսվող հայերեն արմատներից շատերն ունեն նաև շրթնային հնչյունով սկսվող տարբերակներ նաև հայերենում. օրինակ՝ գել – ոլոր, գետ – վայթել, գառ – որոջ, գոգ – ոգել և այլն: Տրամաբանական է, ուրեմն, ուստի են вода, անգլերեն water բառերը կապել ոչ թե գետ, այլ վայթ – արմատի հետ, համապատասխանաբար՝ հայերեն ոլոր – լատ. volvo, ere «ոլորել, զլորել», սանս. val «շրջվել, դառնալ», valana «շրջադարձ, պտույտ», անգլ. wallow «զլորվել», *հ. բ. գ. wëllan «ոլորել», ռուս. вал, հայերեն որոջ – հ. պրու. varak «խոյ», շվեդ., դան. fār «գառ» (բելուջերեն gvarak ձևն ակնհայտորեն անցումային տարբերակ է): Հայերեն գետ, գել, գառ արմատների դիմաց գտնում ենք էտնալեզվային պայթականներով սկսվող արմատներ այլ *հ.-ե. լեզուներում՝ գետ – շվեդ. gjuta «լցնել, ջրել», նորվ. gyte «լցնել», գել – լատ. glomus/globus «գունդ, կծիկ», հինդի gol «կլոր», սանս. kāla «բիր», ռուս. клонить, գառ – լիտվ. gėras «գառ», իռլ. caera «ռչխար»:***

4. Հայերեն գ պայթականին այլ լեզուներում կարող է համապատասխանել *յ ձայնորդը: Օրինակ՝ հայ. գեղմն – անգլ. yarn «բուրդ», հայ. գեղձ – անգլ. . yearn «տենչալ», հայ. գառ – լիտվ. jeras «գառ»:*

## ОЧЕРКИ ТИПОЛОГИЧЕСКОГО СРАВНЕНИЯ АРМЯНСКОГО И РЯДА ИНДОЕВРОПЕЙСКИХ ЯЗЫКОВ

Г О А Р Н И К О Г О С Я Н

### Р е з ю м е

Типологическое сравнение данных ряда индоевропейских языков с данными армянского языка показывает, что заднеязычные взрывные в начале слова в армянском языке с течением времени “изнашиваясь”, превратились в сонанты у, w/v. Армянские корни с начальным g в свою очередь имеют свои этимологические параллели с начальным у или w/v в других и.-е. языках. На материале других и.-е. языков показано, что корни с заднеязычными взрывными являются первоначальными. В пользу вышеизложенного говорит то обстоятельство, что при учетывании данной фонетической закономерности представляется возможным определить изоглоссы многих армянских корней в других индоевропейских языках.